



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՎԵՐՈՒՆՈՒՄԻ ՏԱՐԻ ԶՄԻՌՆԻԱ ՇԱԲԱԹ 24 ՅՈՒԼԻՍ 1876.

ԹԻԻ 1045

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Պատերազմին ասպարէզէն հասեալ լուրքն թէն միշտ նպատաւոր են կայսերական զօրաբանակին . թէն Սերվիոյ զօրքն՝ որ մինչև յայսօր չկրցան միաւորուիլ Գաւառապետի զօրազինին հետ , թողով իրենց յարձակողական դիրքը , պարտաւորեցան՝ հալածեալ ՚ի կայսերական զօրաց , պաշտպանողական դիրք մի բռնել , այսու ամենայնիւ յայտնի իրողութիւն մըն է թէ տակաւին վճռական մեծ ճակատամարտ մի տեղի չունեցաւ , որ փառաւոր յաղթութեամբ մի պատեւելով զյանդգնութիւնն ապստամբաց , պարտաւորէր զկառավարութիւնն Սերվիոյ և Գաւառապետի խաղաղութիւն խնդրել խնարհաբար ՚ի Բարձրագոյն Դրանէ :

Սակայն այս վճռական պատերազմն անյապաղ տեղի պիտի ունենայ և տարակոյս չկայ թէ յաղթանակն պիտի պսակէ զքաջութիւնն կայսերական զօրաբանակին . վասնզի յիշեալ երկու փոքրիկ ժողովուրդքն անկարող են դէմ դնել իրենց զօրութեանց օսմանեան տէրութեանն , որ կանուխ կամ անագան պիտի ջախջախէ զայնոսիկ :

Պէտքէն գրեալ թղթակցութիւն մի կը հաւատատէ թէ հիւսիսային երեք մեծ կայսերութիւնքն համաձայնեալ են մէջերնին որպէսզի զինի սակաւ ինչ ժամանակի՝ հրաման զրկեն Սերվիացոց և Գաւառապետոց որ զէնքը ձգեն և դադարին ՚ի պատերազմելոյ . բայց եթէ այս հրամանն ՚ի դուրս չդուրս , տարակոյս չկայ թէ Աւստրոհունգարիան պիտի պարտաւորի զինուորական միջամտութեամբ մի ՚ի Սերվիա՝ դադարեցնել զպատերազմն առ ՚ի հաստատուն պահել զհերքին խաղաղութիւն իւր և զհնազանդութիւնն հարաւային Սլաւ հպատակաց իւրոց : Նմանապէս տարակոյս չկայ թէ այս պարագայիս մէջ Պէրլինի դահլիճն , որ մեծ մտերմութեամբ

համաձայնեալ է Աւստրոհունգարիոյ կառավարութեան հետ , նպատաւորաց պիտի լինի նմա՝ բարեկամական դործունեայ աղբարարութիւններ ընելով Ռուսիոյ դահլիճին :

Պէրլինի յիշեալ թղթակցութիւնն կը յաւելու նաև թէ Սերվիոյ և Գաւառապետի այս պատերազմն սահմանեալ է տարրութիւն և ամբիօքեալ մնալ ՚ի նոյն տեղով ըստ որոշման մեծ տէրութեանց : Եւ այս որոշման ճշգրիտ ՚ի դուրս դուրսեալ վերայ տարակոյս չկայ կըսէ , վասնզի Բէզէրպուրիկի դահլիճն թէն համակիր Սլաւեանց եղբրուն , բայց անշուշտ յանձնառու պիտի չլինի պատերազմ բանալ Աւստրոհունգարիոյ , Գերմանիոյ և Անգլիոյ դէմ միանգամայն վստահ իրագործելոյ զերազն Սլաւեան թագաւորութեան միոյ՝ Պալքանեան երկրին մէջ : Այս , Թուրքիոյ աշխարհագրական տախտակին փոփոխութիւնն՝ եւրոպական մեծ պատերազմի մը պատճառ պիտի լինի , որոյ հետեւութիւնքն անհաշուելի են :

Այս ամեն պատճառաց համար՝ Պէրլինի դահլիճը կը յորդորէ միշտ զկառավարութիւնն Ռուսիոյ՝ համաձայնել ընդ Աւստրոհունգարիոյ . վասնզի Գերմանիան՝ Արեւելեան խնդրոյն մէջ , թէպէտև համաձայնութեամբ պիտի վարուի Ռուսիոյ հետ , սակայն այնու պայմանաւ որ Ռուսիան ևս համաձայն լինի վէճնայի և Բէշթի հետ : Զինի սակաւ ժամանակի դէպքերն պիտի ապացուցանեն , կըսէ Ֆրէյտէնշտէյն օրագիրն , թէ երկու կայսերքն (Աղէքսանդր Բ. և Ֆրանչիսկո Յովսէփ) համաձայն են իրենց երրորդ դաշնակցին (Գերմանիոյ կայսեր) և եւրոպիոյ բոլոր տէրութեանց հետ վստահ վերահաստատելոյ զխաղաղութիւնն Պալքանի թերակղզոյն մէջ՝ առանց ՚ի վտանգի դնելոյ զտիեզերական խաղաղութիւնն և առանց քիստ հասցնելոյ այն օգտի՝ զորս Աւստրիան պարտաւորեալ է պահպանել , ըստորում իւր գոյութեան հիմունքն են :

Կայսերական կառավարութիւնն ստիպեալ ՚ի

մանր ծախուց , ներկայ պատերազմին , որոշեց երեք միլիոն լիւայից թղթագրամ հանել : Ուստի Սերվիոյ նախորդ կառավար Վոնա . համարի փաշային նախագահութեամբ յանձնաժողով մի կազմեցաւ , որ պիտի հսկէ յիշեալ երեք միլիոն թղթագրամոյն տպուելուն . և ուրիշ կարգադրութեանց վերայ : Այս գումարոյն ապահովութեանը համար յատկացեալ են կայսերական գանձուն անշարժ ստացուածքն՝ որ հանգուցեալ Ապտիւլ-Ազիզ Սուլթանէն մնացին , նմանապէս էրէկլիի ամխահանքին եկամուտը : Կըսուի թէ կայսերական ամեն պաշտօնատունք՝ բաց ՚ի մոքսատանց , պիտի ընդունին իբրև ողջ դրամ , զի յիշեալ թղթագրամն :

Կ. Պոլէն ամսոյս 19էն կը մանուցանեն թէ կայսերական հինգ զօրաբաժինք յարձակեցան և մտին ՚ի Սերվիա . իսկ Ահմէտ էյուպ փաշան՝ զինի աւերելոյ զՏէրպէնին , յառաջացաւ մինչև ՚ի չորս ժամ բայակայ Գրուսէվայէն : Սերվիացի զօրքն հալածուելով ՚ի կողմանց Վիտինի , կը փախչին և կապառտանուին ՚ի բերդաքաղաքն Ալէքսինաց , ուր կը գտնուի Միլան իշխանն հանդերձ իւր զօրաբանակաւ :

Կ. Պոլսոյ թուրքերէն լրագիրք կը հրատարակեն թէ Կալկաթայի մահմէտական ժողովուրդն եռանդուն սիրով և բազում ցնծութեամբ ընկալան զբարեյաջող լուրն դահակալութեան Սուլթան Մուրատ Խան շինգերորդին և այս առթիւ մեծ օգնութեամբ իւր և ճրագավառութիւնք եղեն յիշեալ մայրաքաղաքին մէջ : Այս հեռաւոր երկրին մահմէտական բազմաթիւ բընակիչքն խնդակցութեան ուղերձ մի կը պատրաստեն և կըստորագրեն , զոր յատուկ պատգամաւորութիւն մի պիտի բերէ , կըսեն , ՚ի Կ. Պոլիս՝ օգոստ . Սուլթանին մատուցանելու համար : Սիրայի Էրմոնիօլիս լրագրէն քաղելով , քաղաքիս Նէֆ Խոսիսի օրագիրն յետագայ նշառակութեան արժանի տողերն կը հրատարակէ .

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ՅԵՂԻՊՏՈՍ(1)

Ի գերա . Աբել Արքեպիսկոպոս :

Ի կարգս Առաջնորդաց Հայոց Եղիպտոսի , որ առաջին է ժամանակաւ քան զամենայն եղիպտոս յարձանակիր , յիշատակի առաջինն ի նոյննէ Գրիգոր վարդապետս անն . որ ի թուականին Հայոց ՄԾԵ (1696) գրէ արձանագիր ի վերայ օրինակի հրովարտակին , որոյ նախագաղափարն տուեալ է յանուն ընդհանուր աղբին Հայոց իբրև գիր պաշտութեան ի Մահմէտէ , յետ երկուց ամաց ընտրութեան նորա ի մարգարէութիւն րովանդակ Մահմէտական աղբին , վասն աղատութեան աղբի մերոյ առ ի համարձակ պաշտել զքրիստոնէութիւն և աներկիւղունելոյ զեկեղեցի ընդ ամենայն տեղիս :

Թիշեալ Գրիգոր վարդապետն ի վերայ նոյն օրինակի հրովարտակին վասն պահպանութեան պնդելի ի ծոց եկեղեցոյ սրբոյն Սարգսի՝ արձանագրեալ է նոյով այսպիսի . « Այս աղատութեան թուղթով ի վերջեցեալ սուրբ Սարգսի հանէ , և ի տան պահէ , կամ ծախէ , կամ արիւնք մարդոց տայ , նոյնիւն լինի յերկոյ սուրբ ժողովոցն , և մեր մեղացն պարտական լինի : Եւ նուաստ Գրիգոր վարդապետս հաստատարով նոյնիւն զճանոցն ի դրանէ սրբոյս , և օրհնեցի զնախով պահպան . ի թուին ՌԾԵ » :

(1) Քաղաքի ի Սալիս ամապրոյ ԱՐԱՐԱՏԱՅ :

տատեալ կնքով իւրով՝ տուալ է Հայոց , դնելով ի լուսանցան այնորիկ զինի քիւր . այլ թէ յորում ժամանակի գրեալ զայն , ոչ ոք յորդի տաճկաց կարաց իմանալ զայն կամ ընթեռնուլ վասն կարի ալլաճե լինելոյ զբոցն և հնալեւեան արարացի բարբառոյն :

Այս ինչ յայտնի է , զի Տաճիկք առին զԲասրայ նախ քան զամս 300 . ուստի հաւատարմ է , թէ յետ առման այնորիկ տուեալն զայն Հայոց տեղոյն յաղատութիւն և անդր եղելոյն Հայոց իսկ յետ ժամանակաց հասեալ իցէ այն դադար ընդ ձեռն գաղթականայն մերոց աստ յեգիպտոս , այլ թէ ոչ ձեռնա՛յն այն ևս անյայտ :

Այսու երևի թէ Հայք՝ եղեալքն այժմ յեգիպտոս , գաղթեալ են յառաջագոյն ի Բասրայ , և զայն գիր ամեալ այսր ընդ իւրեանս : Նախ քան զտիրապետութիւն Նապօլէոնի ի վերայ Եգիպտոսի , տիրէին այսմաշխարհի Բեօւլամանք (Բամբուլք) ասացեալ բղիշխք տաճական իշխանութեամբ , որոց առնլով զնոյն յՕսմանեան գրանէ՝ յաջորդէին միմեանց ի նմին իշխանութեան :

Սոքա՛ Բեօլամանք՝ էին քրիստոնեայք և Վրացիք աղբաւ , որք գերեալք ի կաւկասային կողմանց , յԱլիսաղաց և ի հարաւային ամանց Պոնտոսի և ի Վրաստանէ ի ձեռն տաճկաց , ամէնքն ի Կ. Պոլսի , ի Բաքեւն (Բաղդատ) և անտի այսր յեգիպտոս . յորոց ի ձեռն ընկալեալ զմահմէտականութիւն , ժողովէին հարատուութիւն մեծ ի շուայլութենէ տէրանց իւրեանց ըստ տաճկական մարկան բարուց . որովք և աղտո լինէին ի

«Ուրախ սրտով կը տեղեկանամք թէ մեր թաղաւորին 'ի մասին հեղինական իրաւանց յառաջ բերած խնդիրներն առ արքունիքն Եւրոպոյ որոց այցելութիւն բրաւ, օրինաւոր և ուշադրութեան արժանի համարեցան, ուստի և հաճոյական միջոցաւորութիւնք տրուեցան նմա: Թագաւորն յայտնապէս ասաց թէ չկրնար վերադառնալ 'ի Հէլլատա, կամ վերադառնալով չկրնար ասել թէ' Հէլլատան հանդարտ պիտի մնայ, եթէ հեղինականութեան պահանջունքն չկատարուին»:

Հէլլատան կողմէ հանդարտ նստի կամ կողմէ անհանդարտ մնայ 'ի վնաս իւր, ասիկա իւր գիտնալու բանն է. իսկ մեր գիտածն այն է, որ թուրքոյ աւերողութիւնն կատարելապէս ապահովեալ է փարսիոյ 1856ին դաշնագրութեամբն, որոյ ներքեւ կը գտնուին մեծ տէրութեանց ստորագրութիւնքն. ուստի ԷՐՄՈՒԲՈ-ՂԻՍ լրագրոյն յառաջ բերած հաճոյական միջոցաւորութիւնքն 'իւր երեւակայութեան մէջ միայն կրնան ծնունդ ունենալ:

—Վէնայի օրագիրք ոմանք հրատարակեցին յանցելու թէ Հէլլատայի Օլկա թագուհին, որ Ռուսիոյ կոստանդիանոս Կեմ—Պրոքին գոստորն է, նամակ մի գրած է հեղինակի փողովորեան՝ յորդորելով զնա զէնք առնուլ 'ի նպատակ վերան ժողովրդոց: Քօթենհակէն հասեալ հեռագիր մի (զոր «Ալլուսթի օրագիրն» կը հրատարակէ) բողոքովն անհիմն է, կըսէ, այս լուրն:

—«Եւրոպի թէ Կ. Պօլսոյ ոստիկանութեան զինուորներէն, կըսէ ՄԱՍԻՍ, հինգ-հազար մարդ պատերազմի պիտի զրկուին, և ասոնց տեղ նոր մարդիկ պիտի ընտրուին, որոց մէջ խօսք կայ թէ՛ քրիստոնեայք և մասնաւորապէս Հայեր ալ պիտի գտնուին: Արդէն ստուգուած է որ՝ կամաւոր զինուորութեան գրուող Հայերը քաղաքապահ զինուորութեան և ոստիկանութեան պաշտօններու պիտի դորձածուին»:

—Բարձրապատիւ Մեծ—Եպարդոսն առ վեհ. կուսակալն մեր յուզարկեալ նամակաւ իւրով կը խնդրէ յատկապէս, որ կայսերական կառավարութեան շնորհակալութիւնքը մատուցանէ բոլոր նուիրատուաց 'ի նպատակ զօրաբանակին:

—Բարձրագոյն Դուռն 'ի բազմաց հետէ որոշած է, որպէսզի թուրքոյ ամեն գաւառաց մէջ երկրագործութեան և վաճառականութեան յանձնաժողովք կազմուին, որոց պաշտօնն պիտի լինի խորհիլ խորհրդակցել 'ի վերայ զարգացման երկրագործութեան և վաճառականութեան, հաղորդելով կայսերական կառավարութեան իրենց խորհրդակցութեանց արդիւնքը: Բայց

գերութենէ. և հասեալք յիշխանութիւն բարձի և աւագութեան, փոխանորդէին յաթոռ իշխանութեան երկրին. որոց և զօրացեալ այսու ի նմին ժամանակի, զերկիրն ամենայն կալեալ էին ի ձեռս՝ պէյուքեան անուամբ, թէև զիշխանութիւն յօսմանցուց անտի առնուին, այլ յազգէ նոցին ոչ ելանէր ոք յայս յաջորդական իշխանութիւն Եգիպտոսի, և ոչ այլազգ. ոք յափշտակել իշխէր զայն:

Ի սոցանէ էր և ոմն Ճեպէճի—պաշի անուն Մուստաֆա պէյ հայազգի տաճկացեալ. որոյ քոյրն Եգիպտոսի անուն Տիխիսեցի՝ եկեալ յերուսաղէմ և լուեալ զտեղի եղբոր իւրոյ, ցանկացեալ տեսանել զնա, որ էր յեգիպտոս, դայ աստ. ուր և անոյցս լեալ ընդ գարձ եղբոր իւրոյ, մնայ աստ, մինչև ցմա՛հ իւր ծածուկ պահպանութեամբ ի նմանէ. ուստի և այս կին Եգիպտոսէ Տիխիսեցի յինէ ի յիշատակ հոգւոյ իւրոյ զհոգեւորուն առաջին (գուցէ արդեամբք եղբոր իւրոյ) և զսառնիճն վասն կարգաւորաց և պանդխտական Հայոց որ յարեւելից հնոյ եկեղեցւոյն սուրբ Սարգիս ի թուականի Հայոց ՌՄԻԶ (1757) յառուրս Նապօլէոնի մեծի, որպէս տեսանի յարձանագրի հոգեւորանս, ի ճակատ գրան սառնիճն ի սրահի այնորիկ. որոց և ստորագրութիւնքն ի կարգս եկեղեցեացն:

Ի տիրել անդ Նապօլէոնի պետութեանն Եգիպտոսի յամին 1798 ի 1 Յուլիոսի, էր աստ յեգիպտոս յազգէ մերմէ 50—60 տուն բնակութեան եկ. բայտ մասին ի Կ. Պօլսոյ:

որովհետեւ մինչև ցայսօր շատ տեղ տակաւին 'ի գործ գրուած չէ յիշեալ որոշումն, ուստի Մեծ Եպարդոսական շնորհամանագիր մի յուզարկեցաւ ամեն տեղ, ինչպէս նաև 'ի քաղաքս, որպէսզի վերոյիշեալ յանձնաժողովքն անյապաղ կազմուին և սկսին իրենց պաշտօնը կատարելու:

—Կ. Պօլսոյ ՀԱՅՐԵՆԻՔ լրագիրն անպատեհ և անհիմն կերպիւ քննադատել կամ պարտաւել ուզելով զմեծաշուք Նուրեան Էֆենտին, կըսէ թէ խորհրդարանական ոճոյ և բառից տեղեկութիւն չունի

Եւ միթէ Հայրէնի կը կարծէ թէ յիշեալ մայրաքաղաքին ազգային խորհրդարանն Անգղիոյ բարլամէնթն է և 'ի լորտերէ կը բարդկանայ, որպէսզի հարկ լինի 'ի դպրոց երթալ խորհրդարանական ոճեր և բառեր սովորելու, և ապա համարձակիլ պատասխանելու երեսփոխանաց ումանց հարցմանցը, որոց մեծ մասը 10—12 կողմնապահ քուէիւք ընտրեալ լինելը շատ անգամ ընթերցեալ եմք ՄԱՍԻՍին մէջ:

Բայց մեք քաջ գիտեմք թէ մեծա. Նուրեան Էֆենտին՝ ոչ թէ Կ. Պօլսոյ ազգային ընդհանուր ժողովոյն մէջ, այլ նոյն իսկ Անգղիոյ բարլամէնթն մէջ անգամ օրինաւորապէս խօսելու կարող անձ մըն է:

«Հռչակաւոր Սինեայց Գալուրն, կըսէ ՓՈՒՆՁ լրագիրն, որոյ և եկեղեցական կարգէ լուծուած ըլլալը՝ Ս. Էմիլիանին և Պօլսոյ Պատրիարքարանի կողմանէ քանիցս 'ի պաշտօնէ ծանուցուած է, այս անգամ գարձեալ եկեղեցական կերպարանք մայրաքաղաքիս մէջ երեւելով, և նոյնպէս 'ի Պատրիարքարան երթալ յանդգնելով, սուրբ Պատրիարքը զինքը տեսեր և Եսապ ճիւղերուն հրամայեց թէ որ զլսէն և վրայէն առնուն եկեղեցական կերպարանքը. և Սինեայց չէ կրցեր դիմագրել և փետրաթափ ըլլալով՝ առակ նշաւակի եղեր է»:

—Քրիստ կողմէն քրիստոնեայ՝ այսինքն Յոյն բնակիչքն յանցելու մղերսագիր մի մատուցեալ են Բարձրագոյն Դրան, խնդրելով խոնարհարար նախ՝ զվերահաստատութիւնն պաշտօնատան միոյ վասն արձանագրութեան դաշնագրութեանց՝ Երկրորդ՝ կը խնդրեն որ նախադատ տեսանին (թէ միջոց հազուադ) մէջ հինգ քրիստոնեայ անգամ գրուին. մինչդեռ այժմ միայն երկու անգամ կը գտնուի 'ի Յունաց՝ որոց թիւը 70,000ի կը հասնի, նմանապէս երկու անգամ 'ի մահմետականաց, որք 1700 հոգի են աւելի չեն, 3. Երկրորդն որ վաղեմի խաղաղարար ատեանքն վերահաստատուին, և բաղկացեալ լինին յանդամաց Յունաց ազգային հոգաւոր

Յետ այսորիկ Յակոբ վարդապետ ոմն յանուն Երուսաղէմի նուիրակ գնացեալ ի Հնդկիս և անտի դարձ արարեալ յեգիպտոս՝ որպէս աւանդեն, չինէ զերկս սենեակս ի վերնայարկի սուրբ Սարգիս եկեղեցւոյն առաջնորդարան անուամբ ի պէտս կարգաւորաց. յորում և վերոյիշեալն խաթուն անցուցանելով զառուրս, վախճանի անդէն և թաղի ի գերեզմանոցին Հայոց, որ ի պարսպի սուրբ Մինաս եկեղեցւոյն:

Յառաջին ժամանակս և ընդհանրապէս նախ քան զտիրապետութիւն Մահմադ Ալի փաշային ի վերայ Եգիպտոսի՝ գրեթէ յառուրս շարժման Գաղղիացւոց ընդդէմ երկրիս, և առանձինն ցամա ժամանակաց Ենիիւլերաց, ազգ. քրիստոնէից յեգիպտոս՝ ունէին զվեժ նեղութիւն, և հալածանս և մահ կրէին յենիւլերաց անտի ի մասին քրիստոնէական կրօնից, էին ի քաղաքի աստ ի Գահիրէ՝ իբրեւ ի բանտի, զի ի միջավայրի քաղաքին ամբոխեալքն հազիւ գտանէին զազատութիւն երկր արտաքս ընդ տունն մինչ ի չուկայն. վասնզի ի փողոցս ինչ՝ յորս պակասեր ընակութիւն քրիստոնէից յանցանել նոցա ընդայն բոտ դիպաց, յարձակէին ի վերայ նոցա Ենիիւլերիք և սրբախօղորդ առնէին առ տեղեւաւքն. և չէր ոք վրէժխնդիր արեանն հեղուլ, և ոչ ոք իշխէր միւսի ձեռն ի մարդասպան անդր և ոչ ոք ևս հարցանէր. զի արեւն քրիստոնէից դին էր ի ժամանակին գրեթէ իւրաքանչիւր բնակութեանց:

Այնքան էր այսօրինակ երկիւղ մարդասպան

բարձութեան նոյն կղզւոյն: 4. Կաղաչեն որ հոտարուի վասն 'նորոգութեան Քիոսի նաւահանգստին, որպէսզի մատչելի լինի՝ առանց վտանգի, ամեն վաճառական նաւուց 'ի զարգացում վաճառականութեան կղզւոյն:

Այս ազերսագիրն՝ որ վսեմ. քիւ Զարիֆի Սոյն գլխաւոր սեղանաւորին ձեռք մատուցաւ կայսերական կառավարութեան, և որոյ համար Կ. Պօլսոյ Յունաց Պատրիարքարանն ևս թաղրիւր մի գրած է, այս ազերսագիրն, կըսեմք, մարդասիրտար ընդունեցաւ 'ի բարձրա. Մեծ—Եպարդոսէն, որ խոստացաւ 'ի նկատի առնուլ զայն 'ի գաղաղել այժմեան քաղաքական դժուարութեանց:

Կ. Պօլսոյ թուրքերէն լրագիրք, նմանապէս զազդիարէն և յունարէն հրատարակական թերթք ոմանք 'ի մօտ առուրս հրատարակելով թուրքաց մարդարէին մէկ հրովարտելով կամ խոստմնագիրք, զոր յեգիպտոսէմ առի Հինթի թի շնորհեալ բոլոր քրիստոնեայ ազգաց իրեք գիր ազատութեան կամ պաշտպանութեան ընդդէմ՝ կրօնամօլ մահմետականաց:

Գերապատիւ տէր Արք. Ս. Արքեպիսկոպոսն 'ի գրուածի իւրում «Ճանապարհորդութիւն յեգիպտոս», զոր հրատարակեալ է մ. ք. ներկայ թուոյս Բանասիրականին մէջ, կը յիշէ զայս հրովարտակն՝ իբրեւ յատկապէս Հայոց ազգին շնորհեալ, և որոյ պատճէնն պահպանեալ գտանի, ասէ, 'ի Գահիրէ 'ի Էլեանի Ս. Սարգիս եկեղեցւոյն Հայոց:

Ահաւասիկ Կ. Պօլսոյ թուրք լրագրաց հրատարակեալ յիշեալ հրովարտակն օրինակը՝ շատ համառօտ թարգմանութեան ՄԱՍԻՍ լրագրին:

«Քրիստոնեայ կրօնաւոր մը կամ ուզեալ մը, թէ լեռը գտնուի, թէ ձորը, անապատը կամ բնակութիւն եղած տեղեր, վրանս տակ կամ աւազներու մէջ, իմ պաշտպանութեան ներքեւ է, ես կը պաշտպանեմ՝ զայն անձամբ կամ իմ կողմնակիցներուս, իմ ազգիս, իմ հետեւորէն. ուս ձեռք, վասն զի քրիստոնեայք իմ հպատակներս, իմ հարկատուներս են. ես զանոնք ամեն հարստահարութենէ ու անիրաւութենէ ազատեցի. իրենց գլխահարկին (խարս) համար ինչ գումար որ իրենց յարմար գայ զայն պիտի վճարեն, և այս ալ ոչ թէ բռնի և ակամայ, որիչ ամեն սուրբն է ազատ կը ճանչեմ զանոնք: Եպիսկոպոսը, քահանայն և կրօնաւորք չլինի ներքին բնաւ իրենց պաշտպան մէջ: Այն քրիստոնեայք որք վանքեր շինած են և անոնց մէջ իրենց կրօնական պարտականութիւնները կը կատարեն, չպիտի վախուին իրենց վանքերէն, ճանապարհորդներն իրենց ճանրէն չլինի

նաւթեան երկրիս, մինչ զի իւրաքանչիւր քաղաքի քրիստոնեայ ոչ ունէր վտահաթիւն հեռանալ ի կրպակաց, կամ յայնոցիկ վտանգայ յորս քրիստոնէից էին կրպակք. և շատք ևս որպէս ասացաք, երկնչէին արտաքս դնալ առահի բռնութեան. իսկ գերդաստանաց գրեթէ չէր լեալ օրէն արտաքս ընդ գուռն երանելոյ, զի մի յափշտակեցին ի բռնադարոցաց. որոց ի ձեռս ամեալ ժանուկ ոք կամ կին իսկոյն ի տաճկութիւն տրուէին. և ընդ չառնուլ նոցա յանձն, ի պէտպէս անտառակութիւնն շուայտելն ընդ նոսա և տանջէին հեթանոսաբար. զի ամենքն և քօրն և զօրապետն բարբարոսք էին, մանաւանդ թէ և քաղաքական իսկ կառավարութիւն բարբարոսական էր ի ժամանակին:

Այս օրինակ գործք էր աշխարհապաշտ երկրիս, և այս ձև քաղաքական կառավարութեան իշխողացն. յորմէ առահի քրիստոնեայք ամբոխեցին գեղեցիկ իւրեանց, և արտաքսուտ անհետ առնէին զձեւ նոցա, ի ներքուստ կառուցանելով նոցա ի տունն տունն, որոց վերնայարկըս յարգարէին ի տուն բնակութեան, և ի ներքնայարկն եկեղեցի, զի մի ծածիցն զայն տաճիկը՝ տեղի և տուն ազգից. որպէսզի մի յառաջ հարկանիցն. թմոյ զայս, և մեռելոյ անդամ առ երկիւղի և առ բռնութեան զտուտ իւրեանց առնէին գերեզմանս. զի ընդ պատարար տանել զայն ի հանգստարան բնաւ իսկ չէր կարելի վտան նախատանոցս և վտան անտանելի չարս ոգործելոյ առ ննջեցեալսն, որպէս և մինչև

արդիւրեւն , անոնց եկեղեցիներն և եկեղեցա-
կան կալուածները չպիտի քանդուին , եկեղեցի-
ներէն բան մը չպիտի առնուի իսլամաց տաճար-
ներուն և տուններու շինութեան գործածութեւն :

«Բաճանայք , կրօնաւորք և ամենայն երկիւ-
ղած ծառայք Աստուծոյ հարկ չպիտի վճարեն :
Անոնք որ լեռները կամ դաշտերը կը բնակին և
ինքզինքնին Աստուծոյ պաշտութեան կընուիրեն ,
ոչ հարկ պիտի վճարեն , ոչ տասանորդ (էօշիւր) ,
և իրենց արդիւնքը տէրութեան գանձուն հետ
չպիտի բաժնեն : Վասնզի այդ անձինք իրենց
արտադրած բերքը չեն վաճառեր , այլ միայն
ապրելու համար երկիր կը մշակեն : Պատերազմի
երթալու ալ պարտաւոր չեն , և ոչ ոք կրնայ
զանոնք երթալու ստիպել :

«Գլխահարկ վճարողները , դիւրակեաց մար-
դիկ , հասութեաւորք (իրատնի) և վաճառականք
12 տրամարժայթ միայն պիտի վճարեն տարուէ
տարի : Ասկէ աւելի բան մը չպիտի ուղղուի ա-
նոնցմէ , տարապարհակ ծառայութիւն բնաւ
չպիտի պահանջուի անոնցմէ . ուր որ երթան ,
ուր որ մտնեն , բնաւ հարստահարութիւն , բնաւ
ապօրինութիւն չպիտի ըլլայ անոնց : Քրիստոնե-
այ կնոջ հաճութեանն կախեալ է իսլամ էրկան
հետ ապրիլ : Այս պարագային մէջ քրիստոնեայ
կնոջ արդիւնքը չէ իւր եկեղեցիներէ երթալ և իւր
կրօնական պարտականութիւնները կատարել :

«Իրիստոնեայք իրենց եկեղեցիներն և այլ
բարեպաշտական տեղերը չինած ժամանակ օգ-
նութիւն պիտի արուի անոնց :

«Այս խոստմանգիրս յաւիտեան անեղծ պիտի
մնայ և ոչ ոք կարող պիտի ըլլայ լուծել զայն :

«Ով որ այս խոստմանգիրս հակառակ վարուի ,
Աստուծոյ խօսքին հակառակ վարուած և իւր
կրօնքն այսին բրած կըլլայ , թէ Սուլթան և թէ
ուրիշ մարդ , Աստուծոյ անէծքը կը բերէ վրան » :

ԱԶԳԱՅԻՆ

Կ. Պոլսոյ ազգային երեսփոխանական ժողովոյն
կողմանէ՝ օգոստ. Սուլթան Մուրատ Հինգերորդ-
ին բարեբաղդ . գահակալութիւնը շնորհաւո-
րելոյ համար՝ ամենախոնարհ ուղերձ մի պատ-
րաստուեցաւ ի ժամանակին թուրքերէն լեզ-
ուաւ , բայց դժբաղդաբար մինչև ցայսօր՝ չեմք
գիտեր ինչ պատճառաւ , տակաւին կարելի
չէր և մատուցանել զայն Նորին կայսերական
վեհափառութեանը , բայց և այնպէս արժան
կը համարուիք հաղորդել մեր ընթերցողաց՝ ՀԱՅ-
ԲԵՆԻՔ լրագրէն քաղելով , զթարգմանութիւնն
յիշեալ ուղերձին , որ ահա ապիկ է .

ցայժմ ի բազում տունս Ղլխաւեաց զան հանգս-
տարանք մեռելոց՝ վկայք բարբարոսութեան
ժամանակին :

Նմանաբ ահա եկեղեցիներն , քրիստոնէից ի
ժամանակէն տակաւին երեւին և պահին առ նո-
սա , ուր ուրեք քաղաքականացեալք են նոքին
յիշխողոս տատ , և յընդհանուր ճաճկաստան
առաւել յԱրիական մասին . յորս ահարկութիւնն
դեռ անշէջ գոյով ի խուժան ուսմիկն և դեր-
եալ ազատութիւն կրօնից քրիստոնեայ ազանց՝
ցայժմ ևս ոչ կարեն համարձակ պայծառացու-
ցանել զքրիստոնէական հանգիստութեան իւրե-
կեղեցեայ իւրեանց , այլ յառաջոյ գրանց իւրին
է զի կառուցեալ են տախտակամած դրունս
երկրորդականս , և է զի պարիսպ չըլապատ ած-
եալ զնոքօք , զի մի՛ արտաքուստ հայեւունիցի
տաճիկ ուսմիկն ի ներքս , կամ՝ զանպատահ
ինչ ի ներքս անդր եկեղեցեայն դարձիցէ :

Ի ժամանակս անդ . Գեօրգիանց և յիշխանու-
թեան ինչիւրեաց Առաջնորդ ոմանք յիշատա-
կին ազդիւ՝ աստ յիշխողոս , բայց ոչ զգործոց
նոցին և զժամանակաց առաջնորդութեանցն
յիշատակարանաց՝ և ոչ բերանացի զրոյց պատ-
մութեանց ձեռոց ժողովրդեան մերոյ . միայն
զանուանս նոցին հանաք որչափ և գտաք յա-
ռաջնորդարանիս մերում աստ ի Գահիրէ , ի
թիւրքիս և ի կոնստանդնուպոլսեան և
նուրիսկալեան ամբողջ Ներսիսեան , յորս
բաց ի ժողովարարութեան դրամաց յազդէս՝
ինչ այլ պատմարանական գիտելի՝ տրժանաւորք

«Տէր Արքայ ,

Ձեր կայսերական գահակալութիւնը բոլոր
Ձեր հպատակ ազգաց փառքն ու պարծանքն
եղաւ , և մեծամեծ յոյսեր տուաւ և աւետեց ,
և նոր ու կենսաւթիք դար մը ծնաւ : Այս առ-
թիւ կը փութեամբ մեր ստորագրեալքս , կայ-
սերական հրամանաւ հաստատեալ ազգային Սահ-
մանադրութեան համաձայն կազմուած Թուր-
քիոյ համայն Հայոց երեսփ. ժողովոյ անդամքս ,
հպատակութեան քաղցր պարտաւորութիւնը
կատարելու : Հայոց ազգը հինգ հարիւր տարիէ
ի վեր հաւատարմութեամբ սոյն արքայական
գահայքը ընդգրկած և հողւոյ և աչքի պէս սի-
րած է , և անոր հովանաւորութեանը ներքեւ
իւր կրօնի ազատութիւնը՝ կրօնական և աշխար-
հական գործոց մասին ի վաղուց շնորհեալ ա-
ռանձնաշնորհութեամբ հաստատեալ և ապա-
հովեալ իր ազգային վարչութեան արտօնու-
թիւնը ամբողջապէս պահպանած է :

Եւ ինչպէս Ձեր երջանկայիշատակ Հօրք գա-
հակալութեան առաջին մեծագործութիւնը ,
արդարութիւնն ու հաւասարութիւնը երաշխա-
ւորող Թանդիմաթի հաստատութիւնն եղաւ ,
նոյնպէս ալ ամէն մարդ կը փափաքէ և կ'ապա-
նէ որ Ձեր վեհափառութեան գահակալութեամբ
Թանդիմաթին նորոգ գործադրութեանը հետ
ըստ պահանջման հարկին և ժամանակին՝ ընդ-
հանուր մէկ վարչական եղանակ մի սահմանուե-
լով Օսմանեան Պետութեան ոյժն ու փառքը
պիտի նորոգուի և հաստատութիւն գտնայ , և
բոլոր Օսմանեան քաղաքները այս միջոցով ան-
գործութիւն և չինութիւն պիտի տեսնեն :

Տէր արքայ , Սուլթան Մուրատ Առաջին՝ ինչ-
պէս Էտիրեքէ գրաւելով Օսմանեան կայսրու-
թիւնը Եւրոպիոյ մասին մէջ ալ հաստատեց ,
Սուլթան Մուրատ Հինգերորդ ալ հասարակաց
որոտքը գրաւելով ազատութեան և արդարու-
թեան Օսմանեան դրօշակը համայն ճաճկաստա-
նի մէջ պարզեց , զոր կը հաստատեն Ձեր կայսե-
րական առաջին հրովարտակին մէջ պարունակ-
ուած բարձրագոյն հրամանները և խոստացեալ
սկզբունքները : Հետեւաբար Ձեր գահակալու-
թեան օրը այնպիսի նշանաւոր օր մ'է , որուն
յիշատակը բոլոր ժամանակակից անձանց մտքէն
վայրկեան մը չպիտի անհետանայ և օսմանեան
Պատմութեան մէջ մեծ տեղ մը պիտի դրաւէ .
և իրեւ նշանաւոր և գեղեցիկ դէպք , անդա-
մանդեայ տառերով արձանագրուելու արժանի
է : Սոյն երանութեան օրը ամեն տեղ և ամեն
տուն ու խրճիթ սրտերէ բղիթած ընդհանուր ու-
րախութեանը մէկ հաւատարիմ և ճշմարիտ

ժանովութեան :

Սակայն այն ամենայն բարբարոսական գործք
և բռնութիւն քաղաքական իշխանութեանն
չիլաւ . բոլորովին յաւուրց իշխանութեան Մահ-
մատ Ալի փաշային . որոյ այդ աշխարհաշէն գոյով
և կամելով ի կրթութիւն մուծանել զաշխարհ
իւր , բնաշինել արար դրանութիւնն , մեղմեաց
զիստատեութեան իւր տաճկական կրօնի առ քրիս-
տոնէիցս ազգ. ետ ազատութիւն քրիստոնէական
կրօնից ընդ ամենայն Երկրպոստ , երաց և ճա-
նապարհ հաղորդակցութեան ընդ ամենայն Եւ-
րոպայ , օրինակօքն բարեկարգեալ զաշխարհ իւր
և նոցին քաղաքականութեամբք պայծառա-
ցուցեալ զժողովրդը զեկն և զբնիկն , որով և
մարդավարեալ ուսմիկն՝ մտին ի հնազանդու-
թիւն լծոյ օրինաց իշխանութեանն :

Այսօրեւ օրինօք եւ նա ի կարգի զգատա-
րանս իւր ըստ շաւղաց կառավարութեան Եւ-
րոպական ազգին . որով արդ հետզհետէ յառա-
ջանայ ոյժին Երկրպոստ ի նմանութիւն լուսաւոր
ազանց , և արդ բազումք ցնն յիշխողոս տուն
բնակութեան . զորոց բազմութիւնը հատորովք
դրեալ են եւրոպացի ճանապարհորդք :

Ձայժմեան ազատութիւն քրիստոնէից յի-
շխողոս հաւատար տեսի մարդկային և կրօնա-
կան ազատութեան և բարեպաշտաց : Այս ցոյցը
լուսաւոր կառավարութեան և մարդասէր օրի-
նաց , յորոյ սրբէս յառաջն զուրկ էր , եզիպտոս
զարդիս նոքօք պայծառանայ :

(Շարանակեցի) :

Թարգման մ'ըլլալու փութացինք՝ սոյն ուղերձը
մատուցանել և Աստուծոյ անհուն կամօքը և
կայսերական բոլոր հպատակաց հաւաքմամբք
և բաղձանօքը կատարուած Ձեր կայսերական
գահակալութիւնը շնորհաւորել :

Ազգովին զգացուած մեր խնդակցութիւնն և
գոհունակութիւնն ըստ արժանոյն յայտնող
բառեր չկրնալով գտնալ , կը բարեմաղթենք որ
բարձրեայն Աստուած Ձեր վեհափառութեան
կեանքը երկարէ և բարեխաղութիւն պարգևէ :

Եւ յայտնելով միանգամայն որ տէրութեան
և հայրենեաց յառաջադիմութեան և չինու-
թեան և պահպանութեան մասին ասկէ վերջ
ալ հաւատարմութեան և ծառայութեան մէջ
պատրաստ պիտի գտնուիմք ,

Մնամք խոնարհ ծառայք
(Ստորագրութիւն)

Մեր նախընթաց թուոյն մէջ Կ. Պոլսոյ ՀԱՅ-
ԲԵՆԻՔ լրագրոյն մէկ յօդուածն հաճութեամբ
սրտի յառաջ բերինք , որ կը ծանուցանէր թէ
Բէգէրսուլուրի աղա Մկրտիչ Սանասարեանց
1000 ռուբլի նուիրեալ է ի նպաստ վանայ Սան-
դիսեան վարժարանին , նմանապէս Կ. Պոլսոյ
ազգային հիւանդանոցին շնորհեալ է 2000 ռուբ-
լի գումարով մի պարտամուհաւոր , զոր ի վէն-
նա բժշկութեան ուսանող Հայ երիտասարդ մի
պիտի վճարէ զկեն երկուց ամաց :

Հարկ կը համարուիք ծանուցանել թէ ՀԱՅԲԵ-
ՆԻՔ լրագրոյն նշանակեալ վերջին նուիրին
գումարը սխալմամբ 2000 գրուած է . որ միայն
500 ռուբլի պիտի լինի :

—Ս. Էջմիածնի ԱՐԱՐԱՅԵԱՆ ամսագրոյն Մայիսի
տետրէն ազգասիրական ուրախութեամբ կը-
քաղենք զհետեւեալ դրամական նուիրատուու-
թեան յուրն որ նշանակութեան արժանի է թէ
ի մասին քանակութեան գումարոյն և՛ թէ ի
քահանայէ միով շնորհեալ լինելոյ համար :

«Տփլիսեայ Հայոց Ս. Նշան եկեղեցեայ միա-
բան բարեկրօն Յովհաննէս քահանայ տէր Գրի-
գորեանց՝ յատուկ գրութեամբ յանուն և ի
նպաստ Ս. Գէորգեան ճեմարանի մայրավանդոս
նախընթաց մի 1500 ռուբլի (իւր ֆրանք 6000) . և
վեհա . Հայրապետն օրհնութեան կոնդակ շնոր-
հեց յանուն նորին և չորից օրդւոցն ըստ բաղ-
ձանաց նոյնի » :

—Տփլիսի ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ լրագիրն հա-
ւանական հաշուովք 100.000 ռուբլի , այսինքն
իւր 400.000 ֆրանք կորուչէ Ս. Էջմիածնի մայր
Աթոռոյ տարեկան բոլոր եկամտից գումարը .
որ ըստ մեր կարծեաց , մեծ գումար մի չէ ասէ :

—Ի Բագու քաղաքէ գրեն մեզ , կըսէ դարձ-
եալ յիշեալ լրագիրն , թէ ձայնագրութեամբ
երգեցողութիւնն մեծ գեր կը խաղայ այժմ և
կեղեցեայ մէջ և ժողովրդեան խուռն բազմու-
թեան ուշադրութիւնն գրաւած է : Մանաւանդ
չարաթ երեկոյներն լի են բաղմութեամբ եկե-
ղեցիկք . եւք ներդաշնակաւոր եղանակաւ ,
այսինքն ձայնագրութեամբ բարձր շարական-
ներ կը կարգացունին :

—Ամսոյս 18ին կիրակի օրն քաղաքիս սուրբ
Մեսրոպեան վարժարանին ընդառնակ պարտի-
զին մէջ՝ որոյ ծայրն առ ժամանակեայ թատրոն
մի շինուած էր , Արշակ Բ. ողբերգութեան ներ-
կայացում տեղի ունեցաւ առաջին բազմաթիւ
Հայ ունկնդրաց յերկուց սեւից : Գերասիմեան
որք յիշեալ վարժարանին յառաջադէմ աշա-
կերաքն էին , դրեթէ ամենքն ևս ազգասիրա-
կան եռանդեամբ և յոյժ յաշողակութեամբ
կատարեցին իրենց փոխադարձ դերերն յուրա-
խութիւն սրտից բոլոր հանգիստեանց , որք
ծաղիւհարութեամբ կը յայտնէին զգոհունա-
կութիւն իւրեանց : Եւրոպական ընտիր երաժշ-
տաց դաս մի՛ որ ժամանակ առ ժամանակ դե-
ղեցիկ եղանակներ կընուագէր , մեծապէս կը-
շարժէին բաղմութեան ազգասիրական խանդն
ու եռանդը :

Այս ազգային գեղեցիկ հանդէսն վերջացաւ
ծիծաղաշարժ և միանգամայն ազգօգուտ կատա-
կերգութեան մի երկայացմամբ , որ ոչ նուազ
ճարտարութեամբ և յաշողակութեամբ ի գործ
դրուեցաւ ի միւսնոցն աշակերտաց :

